4809

# ԾՐԱԳԻՐ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

և

# ԿՐՕՆԻ

դասատուութեան

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Արևելեան Լեզուաց

ՄՈՍԿՎԱ.
Типографія быв. А. В. Кудрявцевой, Мясницкая, д. Сытова.
1882.

491.992(07)
Ծ-98

491.99(07)
Ծ-98

# ԾՐԱԳԻՐ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

և

# ԿՐՕՆԻ

դասաւանդութեան

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Արեւելեան Լեզուաց

15319-58

ՄՈՍԿՎԱ.
Типографія быв. А. В. Кудрявцевой, Мясницкая, д. Сытова.
1882.

2010
2002

Печатано по опредѣленію Господина Попечителя Московскаго Учебнаго Округа, Мая 20 дня 1882 г.

(528-50)
15913-88
32635-Ա.Հ.
2002

# ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Նախակրթարանում ուսուցանում են հետեւեալ աղօթք-ները՝ Աղօթք Տէրունական, Ով սուրբ Աստուածածին, Առաւօտեան, Երեկոյեան, Յառաջ քան զճաշկերոյթ, Յետ ճաշկերութի, վասն Թագաւորի և Հանգանակ հա-ւատոյ.

---

## Հին-Կտակարան.

Ստեղծագործութիւն աշխարհի և մարդոյ: Դրախտ: Պատուիրանազանցութիւն և պատիժ: Ադամայ և Եւայի զաւակները: Աբէլի մահը, Կայենի պատուհասը: Սէթ Աբէլի փոխանակ: Նոյ և տապան. Նոյի որդիք: Ջրհեղեղ: Աբրահամ: Իսահակ: Աբրահամայ պատարագը: Իսահակայ ամուսնութիւնը: Եսաւ և Յակոբ: Վերջինի երկոտասան որդիք. Յովսէփի մանկութիւնը. Նորա վաճառումն: Փարաւոնի երազները: Յովսէփի տուած մեկնութիւնը: Յակոբի որդւոց գալուստը Եգիպտոս նոցա ներկայանալը Յովսէփին. Յակոբի չուարարութիւնը Եգիպտոս ընտանիքով: Փարաւոնի ընդունելութիւնը: Մովսէսի ծնունդը: Նորա տեսիլը Քորեբ սարի մօտ: Իսրայելացիների ելքը Մովսէսի և Ահարոնի առաջնորդութեամբ: Սինայական տասնաբանեան պատուիրանքը: Մովսէսի վախճանը:

---

## Նոր-Կտակարան.

Զաքարիա և Եղիսաբէթ. Նոցա որդին Յովհաննէս Մկրտիչ: Սուրբ Կոյս Մարիամ: Նորա ծնողքը, Յովակիմ և Աննայ: Քրիստոսի մարդեղութիւնը: Քառասնօրեայ անսուաղ ծոմապահութիւնը, նորա փորձութիւնը և մկրտութիւնը: Յիսուս Երուսաղէմի Տաճարում: Յիսուսի առակների և հրաշքների վերայ համառօտ տեղեկութիւն: Նորա պայծառակերպութիւնը: Ղազարոսի Յարութիւնը: Յիսուսի հրաշափառ գալուստը Երուսաղէմ—ծաղկազարդ: Նորա մատնութիւնը: Զատկական Գառը-Ընթրիք: Ոտնալուայ: Յիսուս՝ Աննայ, Կայափայ, Պիղատոս և Հերովդէս առաջին: Յիսուսի չարչարանքը, Խաչելութիւնը, Թաղումն, յարութիւնը և Համբարձումն: Հոգւոյն սրբոյ Իջումն Առաքելոց վերայ վերնատանը:

---

## Առաջին դասատան մէջ աւանդվում Սրբազան Պատմութիւն Հին Կտակարանի՝ հետևեալ դասագլուխների բաժանուած.

### Աշխարհի ստեղծագործութենից մինչև Մովսէս.

1. Ստեղծագործութիւն աշխարհի. 2. Նախաստեղծների նախկին բնակութիւնը, և նոցա պատուիրանազանցութիւնը. 3. Կային և Աբէլ. 4. Համաշխարհական ջրհեղեղ. 5. Նոյի որդիքը. 6. Աշտարակաշինութիւն. 7. Կոչումն Աբրահամու. 8. Աբրահամ և Ղովտ. 9. Աստուծոյ ուխտը Աբրահամի հետ. 10. Աբրահամի հիւրասիրութիւնը. 11. Սոդոմ և Գոմոր քաղաքների կործանումն. 12. Աբրահամ զոհ է բերում իւր որդին Իսահակը. 13. Ամուսնութիւն Իսահակայ. Եսաւ և Յակոբ. 14. Յակոբի ճանապարհորդութիւնը դէպի Միջագետաց երկիրը և նորա բնակութիւնը Լաբանի մօտ. 15. Յակոբ վերադառնում է իւր հայրենիքը. 16. Յակոբի որդիքը. 17. Վաճառումն Յովսէփի և տանիլը դէպի Եգիպտոս. 18. Յովսէփի վիճակը Եգիպտոսի մէջ. 19. Յովսէփի փառքը և մեծութիւնը. 20. 21. Նորա եղբարքը սովի պատճառով երկու անգամ գնում են Եգիպտոս. 22,23. Յակոբ տեղափոխվում է Եգիպտոս նորա մարգարէական օրհնութիւնը իւր որդիներին և մահը. 24. Յոբ երանելի.

## Մովսէսից մինչև Սաւուղ.

25. Իսրայելացւոց տառապանքը Եգիպտոսի մէջ. 26. Ծնունդ և դաստիարակութիւն Մովսէսի. 27,28. Մովսէս ընտրվում է Իսրայէլի առաջնորդ. վերադառնում է Եգիպտոս. 29. Զատիկ Տեառն և ելք Իսրայելացւոց յԵգիպտոսէ. 30. Իսրայելացւոց անցքը Կարմիր ծովից և վերջին պատուհասը Փարաւոնի. 31. Իսրայելացւոց ճանապարհորդութիւնը անապատի մէջ. 32. Խորան վկայութեան և տապանակ ուխտի. 33. Մովսէս ուղարկում է լրտեսներ դէպի Աւետեաց երկիրը. 34. Կորխ, Դաթան և Աբիրոն. 35. Մովսէսի և Ահարոնի սխալմունքը. Ահարոնի մահը. Օձն պղնձի. 36. Մովսէսի վերջին խրատը և նորա վախճանը. 37. Յեսու յաջորդ Մովսէսի. Իսրայելացիք նորա առաջնորդութեամբ անցանում են Յորդանանից և մտնում են Աւետեաց երկիրը. 38. Իսրայելացիք տիրապետում են Երիքով և Գայի ասուած քաղաքներին. 39. Յեսու, տիրելով Աւետեաց երկրին, բաժանում է այն Իսրայելացւոց:

## Դատաւորք.

40,41. Իսրայելացւոց վիճակը դատաւորների ժամանակ. Դեբորա և Բարակ. 42. Գեդէոն. 43. Յեփթայէ. 44. Սամփսոն. 45. Հռութ. 46. Հեղի քահանայապետ. Ծնունդ, մանկութիւն և կոչումն Սամուէլի. 47. Հեղիու տան կործանումն, տապանակի գերութիւնն ու դարձը. Սամուէլ վերջին դատաւոր Իսրայէլի:



## Սաւուղից մինչև Բաբիլոնի գերութիւնը.

48. Սաւուղ, առաջին թագաւոր Իսրայելացւոց. 49. Սաւուղ իւր անհնազանդութեան պատճառով մերժվում է թագաւորութեան գահից. 50. Դաւիթ օծվում է թագաւոր և յաղթում Գողիաթին. 51, 52. Սաւուղի նախանձն ու ատելութիւնը դէպի Դաւիթ և նորա մահը. 53. Դաւիթի թագաւորութիւնը. 54. Դաւիթի յաղթութիւնքը, նորա մեղքը և ապաշխարութիւնը. 55. Դաւիթի տառապանքը. 56. Սողոմոնի թագաւորութիւնը և նորա իմաստուն դատաստանը. 57. Սողոմոնեան տաճարի շինութիւնը և նորա նաւակատեաց հանդէսը. 58. Սողոմոնի փառքը և նորա կործանումն. 59. Իսրայէլի թագաւորութեան բաժանումն. 60. Մարգարէք:

## Թագաւորութիւն Յուդայի.

61. Համառօտ տեսութիւն թագաւորութեան Յուդայի. Ռոբովամ. 62. Եսայի մարգարէ. Աքազ. 63. Եզեկիա. նորա բարեպաշտութիւնը. Երեմիա մարգարէ. 65. Սեդեկիա. Կործանումն թագաւորութեան Յուդայի.

## Թագաւորութիւն Իսրայէլի.

66. Համառօտ տեսութիւն թագաւորութեան Իսրայէլի. Յերոբովամ. 67. Աքաաբ արքայ Իսրայէլի, Եղիա մարգարէ. 68. Եղիա յանդիման է լինում Աքաաբին և խայտառակում Բահաղի մարգարէքը. 69. Վերացումն Եղիայի. 70. Եղիսէի հրաշագործութիւնքը. 71. Յովնան մարգարէ. 72. Ովսէէ. Կործանումն թագաւորութեան Իսրայէլի. 73. Տովբիթ. Տուբիայի ճանապարհորդութիւնը և նորա վերադարձը:

### Բաբիլոնի գերութենից մինչև Քրիստոսի ծնունդը.

74. Հրէից վիճակը Բաբիլոնի գերութեան մէջ. Եզեկիէլ մարգարէ. Դաստիարակութիւն Դանիէլի և ընկերաց նորա. 75. Երեք մանկունքը վառած հնոցի մէջ: 76. Նաբուգոդոնոսոր իւր հպարտութեան համար պատժվում է Աստուծուց. 77. Կոչունք Բաղտասարայ և անկումն Թագաւորութեան Բաբիլոնի. 78. Վերադարձ Հրէից Բաբիլոնեան գերութենից. Կրկին շինութիւն տաճարին Երուսաղեմի. 79. Եզր քահանայ. Նեեմի. Եսթեր:

### Հրէայք Մակեդոնացւոց իշխանութեան ներքոյ.

80. Աղեքսանդր մակեդոնացին Երուսաղեմի մէջ. Սամարացւոց տաճարը. Թարգմանութիւն Սուրբ գրոց Եբրայեցերէնից դէպի յոյն լեզու. 81. Հալածանք Անտիոքոս Եպիփանու. Նահատակութիւն Եղիազարու և եօթն եղբարց. 82. Մատաթի և որդիք նորա: Փարիսեցիք և Սադուկեցիք.

### Հրէայք Հռովմայեցւոց իշխանութեան ներքոյ.

83. Հիւրկանոս Բ. և Արիստոբուղոս Բ. Հերովդէս Թագաւոր Հրէից.

Ձեռնարկն է Պատմ. Աստուածաշունչ սուրբ գրոց Հին Կտակարանի
Ց. Ք. Պօպովեանց: Մոսկվա 1879 թ.



Երկրորդ դասատան մէջ աւանդվում է Սրբազան Պատմութիւն նոր կտակարանի, Քրիստոսի ծնունդից մինչև Համբարձումն Նորա յերկինս, յետագայ դասագլուխների բաժանուած.

1. Ծնունդ և ընծայումն Ս. Աստուածածնի. Զաքարիա, Եղիսաբեթ և Գաբրիէլ հրեշտակը. 2. Աւետումն Ս. Կուսին. 3. Ծնունդ Յովհաննու Մկրտչի. 4. Ծնունդ Յիսուսի Քրիստոսի. 5. Մոգերի գալուստը արևելքից և ընծայաբերութիւնքը նորածին աստուածեղէն Մանուկին. 6. Տեառնընդառաջ. Սիմէոն ծերունի. 7. Փախուստ յեգիպտոս. Երկոտասանամեայ Յիսուսը տաճարի մէջ. 8. Քարոզութիւնք Յովհաննու Մկրտչի. Մկրտութիւն Յիսուսի. 9. Յիսուսի փորձութիւնը անապատում. 10. Յովհաննու Մկրտչի վկայութիւնը Յիսուսի Քրիստոսի մասին. 11. Յիսուսի առաջին աշակերտները 12. Գալիլէայի Կանա քաղաքի հարսանիքը:

### Յիսուսի Քրիստոսի քարոզութեան առաջին տարին.

13. Յիսուս տաճարից արտաքսում է վաճառականները. 14. Տիրոջ խօսքը Նիկոդիմոսի հետ. 15. Սամարացի կինը. 16. Թագաւորականի որդւոյ բժշկութիւնը. 17. Յիսուսի քարոզութիւնքը Նազարէթ քաղաքում. 18. Հրաշալի ձկնորսութիւն. 19. Անդամալուծի բժշկութիւնը Կափառնաում քաղաքում. Մատթէոս Առաքելոյ կոչումը:

Յիսուսի Քրիստոսի քարոզութեան երկրորդ տարին.

20. Երեսնութամեայ անդամալոյծը Բեթհեզդա աւազանի մօտ. 21. Այլ օրինակք Յիսուսի բարեգործութեանց շաբաթ օրերի մէջ. 22. Երկոտասան Առաքելոց ընտրութիւնը. 23. Հովմայեցի հարիւրապետը. 24. Այրի կնոջ միամօր որդին Նային քաղաքում. 25. Փրկիչը Սիմոն փարիսեցւոյ տան մէջ. 26. Սերմնացանի առակը. 27. Որոմնացանի առակը. 28. Ինքնաբոյս ցորենի և մանանեխի հատի առակները. 29. Յիսուս հանդարտեցնում է ալէկոծութիւնը. Գերգեսացւոց երկրի դիւահարը. 30. Յիսուս բժշկում է մի հիւանդ կին, յարուցանում է Յայրոսի դուստրը, լուսաւորում է երկու կոյրերի աչքերը և բժշկում է մի համր դիւահար. 31. Յիսուս հրաշագործութեան և քարոզութեան իշխանութիւն է տալիս Առաքելոց. 32. Գլխատումն Յովհաննու Մկրտչի. 33. Յիսուս հինգ հացով կերակրում է հինգ հազար մարդ. 34. Յիսուս գնում է ջրերի վրայ և ազատում է Պետրոսը վտանգից: Յիսունի վարդապետութիւնը Հաղորդութեան խորհրդի մասին:

Յիսուսի Քրիստոսի քարոզութեան երրորդ տարին.

35. Յիսուս յանդիմանում է փարիսեցւոց նախանձայուզութիւնը. Քանանացի կինը. 36. Տիրոջ գուշակութիւնը իւր չարչարանաց և մահուան մասին. 37. Պայծառակերպութիւն Քրիստոսի. 38. Դիւահար լուսնոտի բժշկութիւնը. Զարմանալի հարկատուութիւն յօգուտ տաճարի. 39. Խրատ և օրինակ խոնարհութեան և ներողամտութեան. 40. Կինն մեղաւոր. 41. Սամարացւոյ առակը. 42. Մարթա և



Մարիամ: 43. Ի ծնէ կոյրի բժշկութիւնը. Հովիւն քաջ. 43. Յիսուս յանդիմանում է փարիսեցիքը և օրինականքը. Երջանկութիւնը անցաւոր հարստութեան մէջ չէ. 44. Յիսուս Քրիստոս համագոյակից է Հօր Աստուծոյ. Հրաւիրեալների առակը. 45. Մոլորեալ ոչխարի, կորուսեալ դրամի և անառակ որդւոյ առակները. 46. Անիրաւ տնտեսի առակը. 47. Անողորմ մեծատան և աղքատ Ղազարոսի առակը. 48. Տասն բորոտների բժշկութիւնը. 49. Անիրաւ դատաւորի և փարիսեցւոյ ու մաքսաւորի առակները. 50. Յիսուս Քրիստոս օրհնում է մանր տղայքը. 51. Մեծատուն պատանին. 52. Այգու մշակների հաւասար վարձատրութեան առակը. Ղազարոսի հիւանդութիւնը և մահը. 53. Յիսուս յայտնապէս խօսում է աշակերտաց հետ իւր չարչարանաց, մահուան և յարութեան վրայ. Սաղոմէ խնդրում է իւր որդւոց համար առաջին տեղը. 54. Կոյրն Երիքովի. Զաքէոս. 55. Ղազարոսի յարութիւնը. 56. Փրկիչը Սիմոն փարիսեցւոյ տան մէջ:

Յիսուսի Քրիստոսի յաղթանակաւ Երուսաղէմ մտանելուց մինչև Համբարձումն Նորա յերկինս.

56. Հանդիսաւոր մուտ Յիսուսի յԵրուսաղէմ: 57. Անիծեալ թզենին. 58. Յիսուսի խօսքը քահանայապետների և ժողովրդեան ծերերի հետ. Մշակների և թագաւորի որդւոյ հարսանեաց առակները. 59. Օրէնք հարկատուութեան. Յարութիւն մեռելոց. 60. Այրի կնոջ լումայն. 61. Յիսուս Քրիստոս գուշակում է տաճարի կործանումն. Երուսաղէմի աւերումն. և աշխարհիս կատարածը. Տասն կուսանաց առակը. 62. Քանքարների առակը. Նկարագիր վերջին դատաստա-

նի. 63. Յուդա մատնիչ. 65. Պատրաստութիւն Զատկի. Ոտնալուայ. Ընթրիք Տեառն. Սահմանադրութիւն Հաղորդութեան Ս. Խորհրդոյ. 66. Կանխասացութիւն Պետրոսի ուրացութեան մասին. Յիսուսի վերջին պատուէրը սիրոյ. 67. Յիսուսի աղօթքը Գեթսեմանի պարտէզի մէջ և Նորա ըմբռնումն. 68. Յիսուս Քրիստոս Աննա և Կայափա քահանայապետների ատենի առաջև. 69. Պետրոսի ուրացութիւնը և Յուդայի կորուստը. 70. Յիսուս Պիղատոսի և Հերովդէսի ատենի առաջև. 71. Գանահարութիւնք և նախատինք Յիսուսի և դատապարտութիւն Նորա ի մահ խաչի. 72. Խաչելութիւն Յիսուսի. 73. Մահ և թաղումն Յիսուսի Քրիստոսի. 74. Յարութիւն Քրիստոսի. 75. Յարուցեալը երևում է աշակերտներին. 76. Յիսուս Քրիստոս յանդիմանում է Թովմասի թերահաւատութիւնը, երևում է Առաքելոց և այլ աշակերտաց Տիբերական ծովի մօտ և Գալիլեայի լերան վերայ. 77. Համբարձումն Քրիստոսի:

Ձեռնարկն է՝ Պատ. Նոր Կտակարանի Յ. Ք. Պալովեանց. Կրօնուսույց Լազարեան Ճեմարանի. Մոսկվա 1881.

---

## Երրորդ դասարան.

### Կրթութիւն Աստուածապաշտութեան:

1) Ընդհանուր ծանօթութիւն.—Հրապարակական Աստուածապաշտութիւն—Նահապետների ժամանակ:—Հին ուխտի—Հրէական եկեղեցին:—Ուխտի տապանակը—Վկայութեան խորանը:—Երուսաղէմի տաճարը—Մովսիսական օրէնքները—Քահանայք և նոցա պաշտամունքը:

2) Նոր ուխտի Քրիստոնէական եկեղեցի—Նորա սկզբունքը Քրիստոսի և առաքելոց քարոզութեամբ—Հիմնական դաւանութիւնը—Կազմակերպութիւնը մկրտութեան և այլ խորհրդոց միջոցաւ.—Նորա բարոյական նշանակութիւնը: Կարգաւորութիւն Եկեղեցական պաշտամանց Առաքելոց ժամանակ, ընթերցմունք, քարոզութիւնք և հաղորդութիւն:—Աստուածապաշտութեան տեղերը:

3) Հայաստանեայց եկեղեցի:—Հայաստանի առաքեալները—Աբգարու թուղթը առ Փրկիչն Յիսուս և պատասխանը—Աբգարու և Հայաստանեայց մկրտութիւնը—Կեսարիոյ եկեղեցին:—Աբգարու առաքելական թղթերը:—Ս. Գրիգոր Պարթև: Երկրորդ ընդհանրական տարածութիւն հաւատոյ.—Աստուածապաշտութեան կանոնները:

4) Եկեղեցւոյ շինութեան ձեւակերպութիւնը։—Սեղանը—Բեմը — Խորհրդանոցը — Ատեանը — Զգեստանոցը—Դպրանոցը—Աւազանը.—Խորանքը—Սիւները — Գմբէթը Աստուածպաշտութեան ձեռնարկ մասերը—Հին և Նոր Կտակարանի կանոնական գրուածք—Ճաշոց գիրք.—Խորհրդատետր պատարագի.—Շարականք—և նոցա բովանդակութեանց և հեղինակների վերայ համառօտ տեղեկութիւն։

5) Եկեղեցւոյ սրբազան առարկայք։ Խաչ—Պատկերք—մասունք Սրբոց—Զգեստք.—Անօթք։—Խնկոց և մոմոց գործածութիւնը—Պատմական ծանօթութիւն այս ամէնքի մասին կարևոր բացատրութեամբ։

6) Եկեղեցւոյ պաշտօնեայք—Նոցա դասակարգութիւնը—Հայրապետ—Եպիսկոպոս—քահանայ — սարկաւագ և ստորին պաշտօնեայք—Նոցա իշխանութիւնը և պարտաւորութիւնը—Ընտրութիւնը, Օծումը, և օրհնութիւնը։

7) Եօթն ժամակարգութեանց վերայ ընդհանուր գիտելիք—Գիշերային ժամ—Առաւօտեան ժամ։ Արևագալի ժամ։—Ճաշու երեք ժամերը.—Երեկոյեան ժամ։—Խաղաղական ժամ։—Հանգստեան ժամ։ Իւրաքանչիւր ժամակարգութեանց վերայ առանձին բացատրութիւն։

8) Առանձին տեղեկութիւն ժամակարգութեան կիւրակէի—Չորեքշաբաթի—Ուրբաթու։ — Պահոց շաբաթի.—Միւս լուր օրեր։—Մեծի պահոց կիւրակէ օրերի և Աւագ շաբաթու։

9) Պատմական տեղեկութիւն տէրունական տօների—Աւետեաց —Ծննդեան — Քառասնօրեայ Գալստեան—Պայծառակերպութեան—Յարութեան և Համբարձման—Հոգեգալստեան. Իւրաքանչիւր տօների պատմական ծա-



նօթութիւն և Հայաստանեայց եկեղեցւոյ առանձին առաքելական կանոնները այդ տօների ժամանակին վերաբերեալ։

10) Աստուածածնի տօները.—Վերափոխումն.—Յղութիւն յԱննայէ.—Ծնունդ Սուրբ Աստուածածնի։—Ընծայումն ի տաճարն.—Գիւտ Գօտւոյ։ Գիւտ տփոյ Պատմական տեղեկութեամբ։

11) Սուրբ Խաչի տօները.—Խաչ Վերաց։—Վարագայ Խաչ։—Երևման Խաչի—Գիւտ Խաչի պատմական տեղեկութեամբ։

12) Սրբոց տօները.—Առաքելոց—Մարգարէից—Հայրապետաց, Վարդապետաց—Մարտիրոսաց—Ճգնաւորաց —Կուսանաց —Միանձանց.—Այս բառերի նշանակութիւնը բացատրելով և առանձին տեղեկութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ Լուսաւորչաց, Սուրբ Թարգմանչաց, Հայրապետաց և արժանայիշատակ տօնելի Վարդապետաց և Նահատակաց։

13) Եկեղեցւոյ խորհրդոց և ծիսակատարութեանն վերայ համառօտ տեղեկութիւն Մկրտութեան—Դրոշմի—Ապաշխարութեան — Հաղորդութեան — Կարգի—Ամուսնութեան—Վերջին օծման։—Արտաքոյ եկեղեցւոյ խորհրդոց ծիսակատարութիւնք հաւատացելոց փրկութեան համար։—Ծիսակատարութիւնք. Եկեղեցի—Խաչ—պատկեր օծելոյ և օրհնելոյ։

14) Պատարագ. Սուրբ պատարագի նշանակութիւնը.—Ո՞վ սահմանեց այն, երբ և ուր, առ ի՞նչ վախճան։—Ի հնումն զիարդ կատարէին այն։—

15) Ո՞յք սահմանեցին հանդիսաւոր պատարագի արարողութիւնը։—Պատարագի նիւթը—Պաշտօնեայք պատարագի։—Նախընթաց պատրաստութիւն խորհրդոյս և հաղորդողաց։

16) „Խորհուրդ խորին“ երգի բացատրութիւն:—Առանձնական աղօթք Պատարագիչ քահանայի:—Զգեստք պատարագի և նոցա նշանակութիւնը.—Քահանային լուացումը.—Հրապարակական խոստովանութիւնը — Սեղանը բարձրանալը—Սաղմոսի և աղօթից բացատրութիւնը:

17) Խորհրդարան.—Ընծայի օրհնութիւնը—Սկիհ—Քօղ:—Խնկարկութիւն—աղօթք և օրհնութիւն:

18) Պատարագիչ քահանայի ժողովրդեան մէջ խնկարկութեամբ հանդիսաւոր շրջելը—Ժամամուտ—Առանձնական աղօթքը.—Ճաշու շարական—Աւետարանի վերաբերելը և ժողովրդեան:

19) „Սուրբ Աստուած“ երգը բացատրութեամբ:—Ընթերցուածք հին և նոր Կտակարանի—Աւետարանի—Հանգանակի հաւատոյ:

20) „Մի ոք երախայից“ քարոզի բացատրութիւնը—Սրբասացութիւն—Ժողովրդոց ՚ի ծունր խոնարհելոյ նշանակութիւնը—Խորհրդոյն ՚ի սեղան վերաբերելը:

21) Ողջոյնտալը—Երեքսրբեան փառաւորութիւն—Քահանային առանձնական Աղօթքը:—„Առէք Կերէք“—„Արբէք ՚ի սմանէ“—բացատրութիւն քահանային առանձնական աղօթից:

22) Հայր երկնաւոր“—Ամենայնի“—„Որդի Աստուծոյ“—„Հոգի Աստուծոյ“ երգերը.—Խորհրդոյ օրհնութիւնը ՚ի փոխումն մարմնոյ և արեան Տեառն:

23) Յիշատակութիւն սրբոց—Կենդանի հաւատացելոց և ննջեցելոց—Յիշատակութիւն Թագաւորաց, Հայրապետաց—Առաջնորդաց,—մանաւորապէս պատարագի նուիրատուաց:

24) Տէրունական աղօթք—Միայն սուրբ երգը—քահանային աղօթքը և հրաւէրը ՚ի սուրբ հաղորդութիւն սուրբ



խորհրդոյ:—Առանձնական աղօթք:—„Որ օրհնես զայնոսիկ“ բացատրութեամբ —Վերջին Աւետարան — Արձակումն:

---

— Ի. Միև նոյն դասերի հետ զուգընթաց շարունակում է ընթերցուածի Աւետարանից, Յովհ. գլ. Ա: Մատթ. գլ. Գ. Դ. Ե. Զ. Է: Յովհ. Ի. Ղուկ Է: Յովհ. Զ.—Մատթ. Ժգ. Ժէ:—Ղուկ. գլ. Ժդ. Ժը: Այս ընթերցուածների իմաստը բացատրում է վարժապետը, մի բարոյական յորդորակով:

## Չորրորդ դասարան.

Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ (Աշխ. Մսերայ վարժ.).

1) Նախկին հիմն Քրիստոնէական հաւատոյ:—Քարոզութիւն Քրիստոսի և առաքելոց:—Քրիստոնէական գլխաւոր պարտաւորութիւն:—Հաւատք:—Աստուածային յայտնութեանց աղբիւրք:—Գիրք երկուց Կտակարանաց:—Բովանդակութիւն Կտակարանաց:—Գլխաւոր մասունք հաւատոյ:

2) Գոյութիւն Աստուծոյ:—գոյութեան ապացոյց Սուրբ գրքից—Արարածոց քննութեամբ: Զի՞նչ է Աստուած:—Ունի՞ անդամ և զգայարանս: „Աստուած“ բառի նշանակութիւնը:—Աստուծոյ յատկացեալ այլ անուանք:—Աստուծոյ բնակութեան տեղը: Աստուածային կատարելութիւնք:

3) Երրորդութիւն աստուածային անձանց։—Ծանօթութիւնք անձանց։—Ծանօթութիւնք անձանց հին և նոր Կտակարանից։—Յատկութիւնք աստուածային անձանց։—Երրորդութեան վերաբերեալ մոլար կարծիք Սաբելի, Արիոսի և Մակեդոնի։ Արարչագործութիւն։—Երևելի արարածք։ Աներևոյթ արարածք։

4) Մարդեղութիւն Աստուածորդւոյն։—Բնութիւնք յաստուածամարդն Յիսուս։—Անձինք։—Կիրք։—Կամք։—Յատկացեալ անուանքս—Յիսուս,—Քրիստոս։—Մեսիա։—Էմմանուէլ։—Յիսուս 'ի պաշտօն քահանայի,—Մարգարէի,—Թագաւորի։

5) Փրկական տնօրէնութիւնք Քրիստոսի։—Յղութիւն.—Ծնունդ.—Մկրտութիւն.—Քարոզութիւն։ Սքանչելագործութիւն։ Չարչարանք։ Խաչելութիւն և վերջին խօսքերն խաչի վերայ։ Կամաւորական մահն։ Արդիւնք չարչարանաց և մահուան Քրիստոսի։—Յետ մահուան անբաժան լինելն Աստուածութեան 'ի մարմնոյ։—Թաղումն։—Անապականութիւն մարմնոյն գերեզմանի մէջ։ Յարութիւնն.—Համբարձումն,—Նստելն ընդ աջմէ Հօր։—Գալուստ Հոգւոյն Սրբոյ։—

6) Աստուածորդւոյ մարդեղութեան վերաբերեալ թիւր մոլորութիւնք Նեստորի.—Եւտիքեսի.—Ապողինարի. Յուլիանեայ։

7) Քրիստոսի եկեղեցին.—Զինուորեալ.—Յաղթական։—Տաճարք։—Յատկական նշանք եկեղեցւոյ։—Խորհուրդ եկեղեցւոյ։—Մկրտութիւն,—Հաստատութիւն խորհրդոյս.—Եղանակ կատարման խորհրդոյս։ Առանց ջրոյ մկրտութիւն։—Դրոշմ.—Հաստատութիւն խորհրդոյս։—Օգուտ ընդունողաց։



8) Ապաշխարութիւն.—Հաստատութիւն խորհրդոյս.—Պատրաստութիւն.—Արդեօք ամենայն մեղք քաւին ապաշխարութեամբ։ Հաղորդութիւն.—Նիւթ խորհրդոյս.—Օգուտ արժանապէս հաղորդողաց։—Պատրաստութիւն հաղորդաց։

9) Ամուսնութիւն։—Հաստատութիւն խորհրդոյս.—Ամուսնութեան առաջին նշանակութիւնն.—Կանոն կատարման խորհրդոյս։—Ազատ հաւանութիւն։—Նպատակ խորհրդոյ Ամուսնութեան։

10) Ձեռնադրութիւն.—Հաստատութիւն խորհրդոյս.—Կարգ տալոյ իշխանութիւն։ Կարգի աստիճանք.—Կաթողիկոսութիւն.—Եպիսկոպոսութիւն· Կարգ կամ աստիճան տալոյ կանոն.—Արժանաւորք Կարգի.—Անարժանք կարգի։

11) Օծումն հիւանդաց։—Հաստատութիւն խորհրդոյս։—Օգուտ խորհրդոյս։—Առաքելոց ժամանակ խորհրդոյս կատարման սովորութիւնն։ Հայաստանեայց Եկեղեցւոյ սովորութիւնն։

12) Շնորհաբաշխութիւն։—Պարգևք Աստուածայինք։—Միջոցք, որով արժանանան շնորհաց։ Տեսակք շնորհաց հոգւոյն։

13) Յարութիւն մեռելոց։—Յարուցելոց առանձին յատկութիւնք։—Ուրացողք յարութեան մեռելոց։—Վերջին դատաստան։—Հատուցումն արդարոց։ Արքայութիւն։—Վայելչութիւն արդարոց։—Դատապարտութիւն մեղաւորաց։—Տանջանք յաւիտենական։—Կատարած աշխարհի։

14) Յոյս Քրիստոնէական։—Խոստացեալ բարիք։—Ինն Երանութիւնք—Սէր։—Սէր առ Աստուած։—Սէր

առ ընկերն։—Աստուածային օրէնք.—Տեսակք օրինաց։ Բնական օրէնք։—Խիղճ մտաց։—Խղճի թելադրութիւն։

15) Բնական օրէնքից առաջացեալ—Քաղաքական—Դատաստանական,—Եկեղեցական օրէնք—Պարտաւորութիւն մարդոյ ի հնազանդութիւն օրինաց։—Գրական կամ գրաւոր օրէնք Հին—Նոր.—Նպատակ օրինաց։ Տեսակք օրինաց։

16) Տասնաբանեայ պատուիրանք—Պարտաւորութիւն մարդոյ առ Աստուած.—Առ ընկերն։—Օրէնք հրամայականք։ Օրէնք արգելականք։

17) Տեսակք մեղաց։—Սկզբնական մեղք։—Միջոց փրկութեան ի սկզբնական մեղաց։—Ներգործական մեղք.—մահուչափ—թեթև։ Գլխաւորք մահուչափ մեղաց։—Մեղք ընդդէմ Հոգւոյն սրբոյ։

18) Աղօթք—իբրև միջոց փրկութեան։ Հրապարակական աղօթք—Առանձնական—Տէրունական աղօթք.—Եօթն խնդրուածք տէրունական աղօթից։

---

Ծանօթութիւն։ Ձեռնարկն՝ է Հրահանգ Քրիստոնէական Հաւատոյ Մսերայ Մագ. Մսերեանց։

—Նոյն Դասարանի մէջ շարունակվում են ընթերցուածք Աւետարանի։ Յովհ. գը. ժգ. Մատթ. ի։ իգ. իդ. իէ. Ղուկ. իգ. Յովհ. ժթ, Մատթ. իը.



## Հինգերորդ դասարան։

1) Քրիստոնէական եկեղեցւոյ նշանակութիւնը և հաստատութիւնը. Ա. Առաքելական դար։—Երուսաղէմի վերնատունը։—Առաջին ժողով առաքելոց և ընտրութիւն Մատաթեայ։—Հոգւոյն Սրբոյ գալուստը։—Պետրոսի և Յովհաննու քարոզութիւնը և մկրտութիւն անդրանիկ հաւատացելոց։—Հաւատացելոց միաբանական կեանքն։ Հալածանք և վէճք եկեղեցւոյն։—Երկրորդ ժողով առաքելոց։—Ընտրութիւն եօթն սարկաւագաց։—Սուրբ Ստեփանոսի նահատակութիւնն։

2) Փիլիպպոս սարկաւագի առաքելական քարոզութիւնը.—Եթովպացի ներքինւոյն մկրտութիւնը։—Սօղոսի դարձը։—Սամարիայի եկեղեցին։—Հեթանոսաց դարձը—Հայաստան։—Կեսարիա։—Պետրոսի տեսիլը։—Անտիոքի եկեղեցին։—Բառնաբայ և Շիղայի քարոզութիւնը։

3) Երրորդ ժողով առաքելոց, Մովսէսի ծիսական և դատաստանական օրէնքը բառնալու համար։—Հերովդէս Ագրիպպասի յարուցած հալածանքը։—Յակոբոս առաքելոյ նահատակութիւնը։—Պետրոսի բանտարգելութիւնը և ազատութիւնը։

4) Հերովդէսի մահը Առաջին ուղևորութիւն Պօղոսի Բառնաբայ գործակցութեամբ, հեթանոսաց քարոզութեան Կիպրոս, Ասիա։ Երկրորդ ուղևորութիւն Պօղոսի։ Հաստատութիւն եկեղեցւոյ Փիլիպպէ և Թեսաղոնիկէ։—Պօղոս Աթէնքի մէջ և Արիսպագի ատեանը։—Դիոնիսիոսի և Դամարեայ դարձը։

5) Պօղոս Եփեսոսի մէջ երեք տարի։—Մակեդոնիոյ եկեղեցին։—Պօղոսի յԵրուսաղէմ դարձը և հալածանքը—Պօղոս Կեսարիա, փելիքս դատաւորի առաջ—Հռոմում։—Ներոնի հալածանքը.—Պօղոսի մահը։—Պետրոսի քարոզութիւնը և մահը։—Միւս առաքելոց քարոզութիւնքը, արդիւնքը և մահը։

6) Հրէից ապստամբութիւնը։—Երուսաղէմի կործանումը։—Եկեղեցւոյ հալածանքն Դոմետիանոս կայսեր ժամանակ.—Հերձուած և մոլորութիւնք, Եկեղեցական մատենագիրք։—Ներքին բարեկարգութիւնք եկեղեցւոյ։

7) Բ. Դար.—Հալածանք եկեղեցւոյ Ադրիանոսի և Տրայիանոսի ժամանակ։—Ջատագովք Քրիստոնէութեան—Կոդրատէս և Արիստիդէս։—Հալածանք եկեղեցւոյ Մարկոս Աւրելիոսի ժամանակ։—Հերձուածք երկրորդ դարու։ Հակառակութիւնք զատկական տօնի պատճառաւ։—Եկեղեցական մատենագիրք։—Եկեղեցւոյ ներքին բարեկարգութիւնք, խորհուրդք և պաշտամունք։

8) Գ. Դար։—Հալածանք եկեղեցւոյ Սեւերոսի, Մաքսիմիանոսի, Դեկոսի—Վալերիանոսի—Աւրելիանոսի և Դիոկղետիանոսի ժամանակներում։—Ականաւոր նահատակք.—Հայրապետք.—Մատենագիրք.—Հերետիկոսք։—Հաւատոյ վարդապետութիւն.—Բարեկարգութիւն եկեղեցւոյ և առաքինի կեանք հաւատացելոց։

9) Դ. դար։ Հրովարտակ Դիոկղետիանոսի քրիստոնէից հալածանաց համար (303 թուակ.)։—Թագաւորութիւն Կոստանդիանոսի.—Խաղաղութիւն եկեղեցւոյ։—Տարածութիւն հաւատոյ այլ և այլ տեղեր։—Մոլար վարդապետութիւն Արիոսի։

10) Առաջին տիեզերական ժողով Նիկիոյ։—Հրաւէր ժողովոյ.—Կազմակերպութիւն ժողովոյ։—Հերքումն մոլո-



րութեան Արիոսի, նզովք և պատուհաս.—Հաստատութիւն ուղղափառ վարդապետութեան եկեղեցւոյ։—Վճիռ։—Հանգանակ հաւատոյ։

11) Թագաւորութիւն Կոստանդեայ։—Աքսոր և վերադարձ Աթանաս Հայրապետի։—Հալածանք եկեղեցւոյ ուրացող Յուլիանոսի ժամանակ։ եկեղեցւոյ վիճակը Յովիանոսի, Վաղենտիանոսի և Մեծին Թէոդոսի ժամանակ։

12) Երկրորդ տիեզերական ժողովք Կոստանդնուպօլսի։—Սկզբնապատճառ ժողովոյ մոլար վարդապետութիւն Մակեդոնի.—Հերքումն մոլորութեան և նզովք Եւնոմեան—Մակեդոնեան, Սաբէլեան, Մարկելեան, Փոտինեան և Ապօղինարեան աղանդաւորաց.—Յաւելուած ի հանգանակն Նիկիոյ։

13) Եկեղեցական ականաւոր մատենագիրք.—Արժանայիշատակ անձինք.—քրիստոնէական սովորութիւնք և եկեղեցւոյ պաշտամունք։

14) Ե. դար.—Ընդհանուր տեսութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց.—Հռովմէական եկեղեցւոյ.—Աւերումն Հռովմայ.—Պեղագեան հերձուած։—Մոլար վարդապետութիւն Նեստորի։

15) Երրորդ տիեզերական ժողով Եփեսոսի.—Թէոդոս փոքրն։—Խռովութիւն եկեղեցւոյ։—Վճիռ ժողովոյն։—Հանգանակ հաւատոյ։

16) Հերձուած Եւտիքեայ.—Ժողով Քաղկեդոնի իբրև չորրորդ տիեզերական ժողով.—Մարկիանոս կայսր։—Դէոսկորոսի դատապարտութիւնն։—Սահման ժողովոյն։—Եկեղեցին Զենոնի և Յուստինիանոսի կայսերաց ժամանակ։ Համառօտ նկարագիր Հայաստանեայց եկեղեցւոյ և նահատակութիւն Սրբոց Վարդանանց։

17) Եկեղեցին Հռովմայ։—Հռովմէական կայսերու-

թեան անկումն։ — Եկեղեցին Գաղղիայում. — Պարսկաստանում. — Աֆրիկէում. — Այլ և այլ տեղերում։ Եկեղեցական մատենագիրք։ — Արժանայիշատակ անձինք։

18) Զ. դար. — Խռովութիւնք եկեղեցւոյ իբրև հետեւանք Քաղկեդոնի ժողովոյն. — Նեստորի համամիտք։ — Բ. ժողով Կոստանդնուպոլսի իբրև հինգերորդ ընդհանրական ժողով. — Տարածութիւն հաւատոյ այլ և այլ ազգաց մէջ։

19) Ընդհանուր տեսութիւն եկեղեցւոյ հետեւեալ դարերումը։ Համառօտ տեղեկութիւն ժողովոց, անցից, երեւելի անձանց և եկեղեցական մատենագրաց։ — Երրորդ ժողով Կոստանդնուպոլսի իբրև վեցերորդ ընդհանրական ժողով։ — Աղանդաւորք — Միակամեանք։ — Պաւլիկեանք. — Պատկերամարտք։

20) Բ. ժողով Նիկիոյ կամ եօթներորդ ընդհանրական ժողով, ընդդէմ պատկերամարտից. — Դ. ժողով Կոստանդնուպոլսի, իբր ութերորդ ընդհանրական ժողով։ — Հակառակութիւն Փոտայ պատրիարգին Կոստանդնուպոլսի, նորա անկումը, աքսոր և մահը։

21) Աղանդ Թոնդրակեցւոց։ Խաչակրաց պատերազմ. — Երրակի ժողովակք Լատերանու. — Լատինաց Երուսաղէմի առումը — Կոստանդնուպոլսի առումը։

22) Լուտերական բողոքականութիւնը. — Կալվէնի պատմութիւնը. — Տրենդինեան ժողով. — Բարդուղիմեան գիշեր. — Գրիգորեան տումար։

---

*Ծանօթութիւն.* Ա. Ձեռնարկն է Պատմութիւն ընդհանուր եկեղեցեաց։ Աշխատութիւն կրօնի վարժ. Յակ. Ա. քահ. Սուքեննեանց. — ձեռագիր տետրակ։

— Բ. Դասերի զուգընթաց ուղղութեամբ շարունակում է ընթերցուածք, — Գործք առաքելոց ամբողջութեամբ և մի քանի պարբերութիւններ Առաքելոց թղթերից և եկեղեցապատում մատենագրերից։

## Վեցերորդ դասարան։

Պատմութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ (Աշխ. Յակ. Ա. քահ. Սուքեննեանց)

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ։

Քրիստոնէական եկեղեցւոյ առաջին երեք դարերը։

1) Ա. դար. — Տարածութիւն հաւատոյ և հաստատութիւն եկեղեցւոյ։ Աբգար թագաւորի հաւատը. — Թադէոս առաքելոյ քարոզութիւնը. — Եկեղեցւոյ վիճակը Աբգարու մահից յետոյ։ — Թադէոսի և Սանդխտոյ նահատակութիւնը. — Սուրբ Ոսկեանք — Սուքիասեանք — Սկիզբն միայնակեցական ուխտի. — Առաքելութիւն Շմաւոնի, Եղիշէի, Սամթէի, Բարդողիմէոսի, Յուդա Թադէոսի։ Յաջորդութիւն առաքելոց։ — Եկեղեցիք — վանօրայք — մատենագիրք։

2) Բ. դար. Տեսութիւն եկեղեցւոյ. — Նահատակութիւն Ոսկեանց — Սուքիասեանց. — Առաքելոց յաջորդ եպիսկոպոսունք։ Նահատակք. — Հիմնարկութիւն Վաղարշապատ քաղաքի. — մատենագիրք։

3) Գ. դար. Տեսութիւն եկեղեցւոյ. — Հալածանք. — Ծնունդ Գրիգորի Պարթեւի. — Հայաստանի քաղաքական

վիճակը.—Տրդատի թագաւորութիւնը.—Գրիգորի չարչարանքը.—Յաջորդութիւն Եպիսկոպոսաց.—մատենագիրք։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

Ընդհանրական Լուսաւորութիւն Հայաստանի։

4) Դ. դար.—Նահատակութիւն Հռիփսիմեանց.—Քարոզութիւն մեծին Գրիգորի.—Տրդատայ և Հայաստանի ընդհանուր լուսաւորութիւնը.—Վաղարշապատի մայր եկեղեցւոյ և այլ եկեղեցեաց շինութիւնը.—Եկեղեցւոյ ներքին բարեկարգութիւնք.—Արիստակէս Հայրապետ.—Նիկիոյ ժողովն հրաւէրը։—Գրիգորի և Տրդատայ վերջին օրերը։

5) Եկեղեցին Սրբոյն Գրիգորի որդւոց և թոռանց Հայրապետութեան միջոցում։—Արիստակէսի.—Վրթանէսի—և Յուսկան և նորա յաջորդ ծերունի Դանիէլի.—Փառներսեհի և մեծին Ներսէսի։

6) Մեծին Ներսէսի մեծագործութիւնքը.—Կոստանդնուպօլիս ուղեւորիլը.—Աքսորը և դարձը.—Կոստանդինուպօլսի ժողովում գահակալելը։—Հայաստան վերադառնալը և մահը.—Յաջորդք Ներսէսի—Սահակ—Զաւէն—Ասպուրակէս—Սահակ։—Ազգային եկեղեցական ժողովք.—Վաղարշապատի Ա.—Աշտիշատի Ա.—Վաղարշապատի Բ և Գ.—Յիշատակաց արժանի անցքեր.—բարեկարգութիւնք.—մատենագիրք։

7) Ե. դար.—Կրկնակի տառապանք յերեսաց Յունաց և Պարսից.—Սուրբ Սահակայ գործքերը. Սուրբ Մեսրովբ.—Հայկական տառերի գիւտ։ Սուրբ գրոց թարգմանութիւն.—Թարգմանիչք—վաստակակիցք Սահակայ



և Մեսրովբայ։ Արշակունեաց թագաւորութեան անկման միջոցում եկեղեցւոյ վիճակը չորս բռնակալ կաթողիկոսաց ժամանակ.—Սահակայ և Մեսրովբայ մեծագործութիւնքը և մահը։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ.

Եկեղեցին Արշակունեաց թագաւորութեան անկումից յետոյ։

8) Յովսէփ կաթողիկոս։—Կրօնական հալածանք Վռամ և Յազկերտ Պարսից թագաւորաց երեսից.—Ատոմեան նահատակք.—Հաւատոյ պատերազմ.—Ներքին թշնամիք եկեղեցւոյ—Վասակ և նորա համախոհք.—Նահատակութիւն Սրբոց Վարդանանց, Ղևոնդեանց։ Հայաստանի և եկեղեցւոյ ընդհանուր աղէտք.—Ժողովք—Վաղարշապատու Գ. Ե.—Աշտիշատու Բ. Գ.—Շահապիվանու Ա.—Աշտիշատի Գ.—Շահապիվանու Բ.—Դունայ Ա.—Վաղարշապատու Զ.

9) Յաջորդութիւն Հայրապետաց եկեղեցւոյ.—Կաթողիկոսունք—Յովսէփ Ա. Սիւնեցի.—Մելիտինէ Մանազկերտցի.—Մովսէս Ա. Մանազկերտցի.—Գիւտ Արահեզացի.—Քրիստափոր Ա. Արծրունի.—Յովհան Ա. Մանդակունի.—Բաբգէն Ոթմսեցի.—Սամուէլ Արծկեցի.—Փոխադրութիւն Հայրապետական Աթոռոյ Դուին (452).—եկեղեցական մատենագիրք։

10) Զ. դար. Վահան Մամիկոնեան։ Նորոգութիւն Սրբոյ Էջմիածնի տաճարին.—Յայտնութիւն դաստառակին Քրիստոսի. Յաջորդութիւն Հայրապետաց.—Կաթողիկոսունք. Մուշէ Այլաբերացի.—Սահակ Բ. Ուղկայեցի։—Քրիստափոր Բ. Բագրևանդցի.—Ղևոնդ

Եռաստեցի.—Ներսէս Բ. Աշտարակեցի:—Յովհաննէս Բ. Սինձեղնացի.—Մովսէս Բ. Եղուարդացի.—Աբրահամ Ա. Աղբաթանցի:—Յաղթանակ ընդդէմ կրակապաշտութեան: Բաժանումն եկեղեցւոյն Վրաց:—Ժողովք, Դունայ Բ. Գ. և Դ.:—Անկումն Հայկական Տումարի և այլևայլ արժանայիշատակ անցք.—Մատենագիրք:

---

Ծանօթութիւն. Ա. Ձեռնարկն՝ է պատմութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ աշխ. Կրօնի վարժ. ձեռագիր տետրակ. Ա. Վ. Սուրէնեանց:

Բ. Եկեղեցւոյ պատմութեան վարժապետը իւր դասախօսութեան հետ կարդում է իբրև վկայութիւն և բացատրութիւն հատուածներ Ագաթանգեղոսի, Մովս. Խորենացւոյ, Փաւստոսի բուզանդացւոյ, Եղիշէի վարդ. և Յովհաննու կաթ. պատմութիւններից:

## Եօթներրորդ դասարան:

Շարունակութիւն Պատմութեան Հայաստանեայց եկեղեցւոյ (երրորդ մասն)
(Աշխ. Յակ. աւ. ք. Սուրէնեանց)

11) Է. դար.—Յայտնութիւն Վարագայ խաչի:—Յաջորդութիւն Հայրապետաց. Կաթողիկոսունք—Յովհաննէս Բ.—Կոմիտաս Աղցեցի.—Քրիստափոր Գ. Ապահունեան—Եզրնկացի.—Անաստաս Ակոռեցի.—Իսրայէլ Վանանդեցի.—Սահակ Գ. Առունաշէնցի: Մահմետականութեան ծագումը.—Պաւլիկեան աղանդաւորաց Հայաստանում յայտնուիլը և անհետանալը.—եկեղեցական մատենագիրք:—Ազգային ժողովք:—Կարնոյ.—Դունոյ.—Ե և Զ.

12. Ը. դար.—Դիմադրութիւն եկեղեցւոյ ընդդէմ Հագարացի մահմետականաց:—Տառապանք եկեղեցւոյ Քաղկեդոնի ժող. հարցի առթիւ:—Դաւիթ Դունեցի.—Վահան Գողթնացի.—Նահատակութիւն—իշխանաց և նախարարաց Հայոց Նախիջևանի մէջ.—Շուշանայ Վահան Կամսարականի դստեր և այլոց:

13) Յաջորդութիւն Հայրապետաց:—Կաթողիկոսունք, Եղիա Արճիշեցի.—Յօհան Գ. Օձնեցի.—Դաւիթ Ա. Արամոնացի—Տրդատ Ա. Վանանդեցի.—Տրդատ Բ.

Դասնաւորեցի.—Սիոն Բաւոնեցի.—Եսայի Նչեցի.—Ստեփաննոս Ա. Դունեցի.—Յակոբ Դունեցի.—Սողոմոն Գառնեցի.—Գէորգ Ա. Ծյլրրբուկ.—Յովսէփ Բ. Կարին:—Ժողովք—Պարտաւ Ա.—Դուին Ե.—Մանազկերտ Բ.—Պարտաւ Բ. Մատենագիրք:

14) Թ. դար. Նահատակութիւն Սահակայ և Յովսեփայ իշխանաց.—Նահատակութիւն Բ. Ատովմեանց.—Սմբատայ Խոստովանողի: Արևորդիք. Թոնդրակեցւոց աղանդի յայտնուիլը: Յաջորդութիւն Հայրապետաց.—Կաթողիկոսունք Դաւիթ Բ. Կակաղեցի.—Յովհաննէս Ե. Ովայեցի.—Զաքարիա Ա. Կոտէից.—Գէորգ Բ. Գառնեցի.—Մաշտոց Եղուարդեցի.—Յովհաննէս Զ. Պատմաբան:

### ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ.

Եկեղեցին, Բագրատունեաց Թագաւորութեան ժամանակ:

15) Բագրատունեաց Թագաւորութիւնը (859).—Ազգային եկեղ. ժողովք Երնջակայ, Շահապիվանու Ա. Բ. Գ.—Մատենագիրք. Եկեղեցւոյ ընդհանուր տեսութիւն.—Հայրապետական Աթոռոյ վիճակը և փոխադրութիւնը Ձորոյ վանք, Վարագ և Անի (Շիրակ):

16) Ժ. դար.—Փոխադրութիւն Հայրապետական Աթոռոյ Վասպուրական (924 Թ.).—Շինութիւն Հաղբատայ. Սանահնի, Սուրբ խաչի ապարանից և այլ վանօրէից: — Յաջորդութիւն Հայրապետաց. Կաթողիկոսունք Ստեփաննոս Բ.—Թէոդորոս Ա.—Եղիշէ Ա.—Անանիա Ա. Մոկացի.—Վահան Սիւնեցի.—Խաչիկ Ա. Մոկացի.—Սարգիս Ա. Սեւանեցի:—Ժողովք Անւոյ Ա.



Բ. Գ. Գ. Ե. Զ:—Սուրբ Գրիգոր Նարեկացի:—Փոխադրութիւն Հայրապետական Աթոռոյ Անի քաղաք.—Մատենագիրք:

17) ԺԱ. դար.—Յաջորդութիւն Հայրապետաց. Կաթող. Պետրոս Ա. Գետադարձ:—Խաչիկ Բ.—Գրիգոր Գ. Վկայասէր.—Բարսեղ Ա. Անեցի: Ազգային եկեղ. ժողովք—Հաղբայ Ա.—Անւոյ Ե. Բ.—Հաղբայ Բ.—Սեաւ լերին Ա. Մատենագիրք:—Վախճան Թագաւոր. Բագրատունեաց:

18) ԺԲ. դար.—Յաջորդութիւն Հայրապետաց. Կաթող.—Գրիգոր Գ. Պահլաւունի.—Ներսէս Գ. Շնորհալի.—Գրիգոր Գ. Տղայ.—Գրիգոր Ե. գահավէժ.—Գրիգոր Զ. Ապիրատ.—Դիոսկորոս Սանահնեցի (հակառակաթոռ):—Եկեղեցւոյ հարիւրամեայ վիճակը: Բագրատունեաց Թագաւորութեան անկումից մինչև Ռուբինեանց Թագաւորութիւնը:—Հայրապետութեան Աթոռի փոխադրութիւնը Հռոմկլայ (1147 Թուակ.):

### ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ.

Եկեղեցին Ռուբինեանց Թագաւորութեան ժամանակ:

19) Համառօտ տեսութիւն Կիլիկիոյ Ազգային և եկեղեցական անցից:—Հաստատութիւն Ռուբինեան իշխանութեան և Թագաւորութեան:—Կրօնական բանագնացութիւնք յունաց եկեղեցւոյ հետ:—Կիլիկեան Թագաւորաց Լատինաց հետ քաղաքական յարաբերութիւնք և Կրօնի վերաբերեալ հետևանքը:—Գրիգոր Տուտէորդի.—Ներսէս Լամբրոնացի.—Ազգային եկեղեց. ժողովք.—

Շուղրայ.—Սեաւ Լերին Բ.—Հռոմկլայի Ա. Բ. Գ.—
Սսոյ Ա.—Տարսոնի Ա.—Մատենագիրք։

20) ԺԳ. դար.—Յաջորդութիւն Հայրապետաց. Կա-
թող.—Յովհաննէս Է.—Դաւիթ Գ.—Կոստանդին Ա.
Յակոբ Ա. Կլայեցի.—Կոստանդին Բ. Կատուկեցի.—
Ստեփաննոս Գ.—Գրիգոր Է. Անաւարզեցի. Կորուստ ե-
կեղեցական և ազգային մատենագրութեան ի Բաղաբերդ.—
Գաղթականութիւն Անւոյ 'ի Լեհաստան և կրօնական
տառապանք։—Փոխադրութիւն Հայրապետական աթոռոյ
'ի Հռոմկլայէ 'ի Սիս.—Ազգային եկեղեց. ժողովք—
Սսոյ Բ.—Լօռւոյ։—Անւոյ Թ.—Սսոյ Գ.—Տարսոնի Բ.
Գ.—Սսոյ Ե։ Մատենագիրք։

21) ԺԴ. դար.—Հաստատութիւն Պատրիարգական
աթոռոյ Հայոց յԵրուսաղէմ։—Թուղթ Լևոն Թագա-
ւորի և Կոստանդիանոս կաթող. առ Յովհաննէս ԻԲ.
պապն.—Յաջորդութիւն Հայրապետաց. Կաթողիկոսունք,
Կոստանդին Գ. Լամբրոնացի.—Յակոբ Բ. Սսեցի.—
Մխիթար Գռնեցի.—Մխիթար Երազեցի.—Կոստան-
դին Գ.—Պօղոս Ա. Ունիթոռեանք Հայաստանում։—
Ազգ. ժողովք—Սսոյ Զ.—Տարսոնի Գ.—Ատանայի.—
Սսոյ Է.—Բարձումն Թագաւորութեան Կիլիկիոյ.—Մա-
տենագիրք.

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ.

Յետ անկման Ռուբինեան Թագաւորութեան մինչև մեր ժա-
մանակն։

22) ԺԵ. դար.—Կոստանդնուպոլսոյ Օսմանեանց ա-
ռումն։—Հաստատութիւն Կոստանդնուպոլսում Հայոց



Պատրիարգական Աթոռոյն։ Յովակիմ՝ առաջին Պատրի-
արգ Կոստանդնուպոլսոյ։—Լենկթեմուրի տուած հա-
րուածներն — Յաջորդութիւն Հայրապետաց.—Կաթո-
ղիկոսունք — Կարապետ Բ. — Յակոբ Բ. — Գրիգոր Ը.
Խանձողատ —Պօղոս Բ. Արարատեցի. — Կոստանդին Ե.
Վահկացի. — Յովսէփ Գ. Սսեցի. — Գրիգոր Թ. Մու-
սաբէկեան։

23) Փոխադրութիւն Հայրապետական Աթոռոյ յԷջ-
միածին։ Կաթողիկոսունք Կիրակոս Վիրապեցի.—Գրիգոր
Ժ. Մակուեցի.—Զաքարիա Բ.—Արիստակէս Բ.—Սարգիս
.—Արիստակէս Գ.—Թադէոս Ա.—Նահատակք և վկայք
եկեղեցւոյ.—Ստեփաննոս եպիսկոպոս Սեբաստիոյ—Թամար
—Գոհար.—Խոսրով.—վկայ և այլք—Սկիզբն Հայկական
տպագրութեան.—Մատենագիրք։

24) ԺԶ. դար.—Յաջորդութիւն Հայրապետաց.
Կաթ.—Եղիշէ Բ.—Զաքարիա Գ.—Սարգիս Գ.—Գրի-
գոր ԺԱ.—Ստեփաննոս Ե.—Միքայէլ Սեբաստացի.—
Բարսեղ Բ.—Գրիգոր ԺԲ. Ստեփաննոս Զ. Արգնացի—
Թադէոս Բ.—Առաքել Վաղարշապատեցի.—Դաւիթ
Ե.—Մելքիսեդեկ։ Նահատակք—Յովհաննէս Արճիշեցի
Վանահայր 30 ընկերօք—Խաչատուր Կողբացի և այլք.—
Մատենագիրք։

25) ԺԷ. դար.—Յաջորդութիւն Հայրապետաց.—
Կաթողիկոսունք—Գրիգոր ԺԳ.—Սահակ Գ.—Մովսէս
Գ.—Փիլիպպոս Աղբակեցի։—Յակոբ .—Եղիազար.—
Նահապետ Եդեսացի։—Մատենագիրք։

26) ԺԸ. դար.—Յաջորդութիւն Հայրապետաց.—
Կաթողիկոսունք՝—Աղէքսանդր Ջուղայեցի.—Աստուա-
ծատուր Համատանցի.—Կարապետ Ուլնեցի.—Աբրահամ
Բ.—Աբրահամ Գ.—Ղազար Ջահկեցի.—Մինաս Ակնեցի.

— Աղեքսանդր Կոստանդնուպօլսեցի.— Յակոբ Շամախեցի.— Ղուկաս Կարնեցի:— Կոստանդնուպօլսոյ ականաւոր Պատրիարգունք: Մխիթար Աբբա.— Սուրբ Ղազարու միաբանութեան հաստատութիւնը և նոցա մատենագրական աշխատութիւնը:

27) ԺԹ. դար. - Յաջորդութիւն Հայրապետաց.— Կաթ.— Յովսէփ Արղութեանց.— Դաւիթ — Դանիէլ:— Ժամանակակից պատմութիւն այս երկու կաթողիկոսաց կուսակցութեանց.— Եփրեմ.— Յովհաննէս Կարբեցի.— Ներսէս Ե. Աշտարակեցի.— Մատթէոս Կոստանդնուպօլսեցի.— Գէորգ Դ. Կոստանդնուպօլսեցի.— Ընդհանուր հայեացք ազգային եկեղեցւոյ Ռուսաստանի — Տաճկաստանի — Պարսկաստանի:

---

Ծանօթութիւն. Ա. Շարունակութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան նոյն իսկ ձեռնարկի ուղղութեամբ եօթներրորդ դարից մինչև մեր ժամանակը:

— Բ. Կարդումէ վարժապետը իբրև վկայութիւն և բացատրութիւն հատուածներ Յովհաննու կաթ. Ստ. Տարօնեցւոյ. Արիստ. Լաստիվերտցւոյ, Կիրակ. վարդ. Վարդանայ, Թովմ. վարդ. և Առաքելի. պատմութիւններից, նմանապէս մի քանի այլ նոր ժողովածուներից ինչպէս է Մսեր վարժ. Կաթողիկոսաց Պատմութիւնը:

Ծրագիր Հայոց Լեզուի Դասատուութեան Լազարեան Ճեմարանում:

## ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

### ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ:

Մայրենի լեզուի ուսումնառութիւնը այս դասարանի մէջ ունի բազմատեսակ խնդիրներ առաջացնելու աշակերտի համար. այդ խնդիրները, մի նպատակի ծառայելով, պիտի զարգացնեն մանուկի բանաւոր խօսքը, հաղորդեն նորան գրագիտութիւն, սովորցնեն նորան թելադրութեան տարրական կանոնները, այլ և փոքր ի շատէ կանոնաւոր կերպով բացատրել իւր մտքերը: Սորա համար սկզբնական դասատուութեան առարկան պատրաստական դասարումը է.

ա.) Արագ և անսխալ ընթերցանութիւն.

բ.) Գիտակից ընթերցանութիւն և բերանացի պատմել կարդացածը.

գ.) Զարգացնել երեխայի մէջ խօսելու շնորհը յարմաւոր վարժութիւններով.

դ.) Հաղորդել երեխային տեղեկութիւններ թէ մարդկային կեանքի թէ արտաքին աշխարհի այն երեւոյթների մասին, որոնք դիւրամատչելի են նորա մտաւորութեանը ու հասկացողութեանը.—և այնպէս համակարգել այդ տեղեկութիւնները, որ դոքա չ'մեղանչեն մանկավարժական կանոնին. „Հեշտից սկսել ու դժուարով վերջացնել":

ե.) Զարգացնել երեխայի մէջ ինքնագործունէութեան ոգին, այսինքն մտածողութեան, երեւակայութեան, ուշադրութեան ընդունակութիւնները:

Պատրաստական դասարանը երկու բաժին ունի. մինը բաղկացած է այն աշակերտներից, որոնք արդէն գիտեն գրել ու կարդալ. միւսը նոցա համար է, որոնք միայն սկսում են գրել ու կարդալ: Տառերի կամ այբուբենի ուսումը գնում է Հնչական կամ Ձայնական ասած եղանակով: Աշակերտը առաջ լաւ ականջ է դնում իւրեան ծանօթ բառի ձայներին, որ գրվում է տախտակի վերայ, աշխատում է մտքում պահել այդ ձայների գծագրութիւնը, ապա և ինքը իւր ձեռքով նկարել դորանց.—և այդպէս ուսանում է գրել ու կարդալ: Աշակերտի բոլոր ուշադրութիւնը այն հանգամանքի վերայ է դարձրած որ ամէնայն բառ կազմած է ջոկ ջոկ ձայներից. դորանց կարելի է անջատել հանել և ապա միաւորել:—Վերլուծել բառերի բաղադրող մասները, որոշելու զանազանել միմեանցից այս և այն ձայնը և ապա դորանց միմեանց հետ կապել կամ բաղհիւսել—է և գլխաւոր խնդիրը սկզբնական գրագիտութեան:—Նա այս լինում է վերլուծական-բաղհիւսական (аналитико-синтетическiй) ճանապարհով: Այբուբենի գրերից մի քանիսը պարզ ձայն են հանում և հեշտութեամբ արտասանվում.—առաջին վարժութեան բառերը նոցանով է սկսվում: Ձայնաւոր գրերը և բաղաձայնները ս, մ, ն, շ, չ, ղ, լ, և այլն. համարվումեն հեշտ և դիւրամատչելի. ընդհակառակն Նուրբ, Միջակ և Թաւ կոչուած գրերը՝ պ, կ, տ, բ, գ, դ, փ, ք, թ, և այլն. համարվումեն դժուար և խլաձայն: Նա այսպիսի տառերը անհրաժեշտ պիտի յետաձգվին:

Ամէն մի նոր դաս, մի նոր առարկայ, որ պիտի սովորեն



աշակերտները, հարկաւորաբար սկսումենք „մեկնողական“ եղանակով: Մեկնողական եղանակ ասելով հասկացվումեն. այն ամէնայն ուսուցանողական ոճերը ու ձեւերը, որ վարժապետը գործ է դնում աշակերտի միտքը գրաւելու դէպի ընթերցանելի առարկան: Մեկնողական եղանակը լուսաբանում է առաջարկած նիւթի դժուարիմաց կողմերը, կենդանի ձայնով զարթեցնում է աշակերտի սրտում մայրենի լեզուի գեղեցկութիւնը և այսօրինակ տալիս է նորան միանգամից և լեզուի ձեւը և բովանդակութիւնը:

Մի քանի ոտանաւորներ, առակներ ու ազգային աւանդներ, որոնք աւելի դիւրամատչելի են մանկական բնաւորութեան և կարող են երեխայի հոգու մէջ առաջ բերել քնքուշ տպաւորութիւններ ու զգացմունք, վարժապետը տալիս է դորանց բերան անել: Ոտանաւորների ազդեցութիւնը, մանաւանդ յաջող և պատշաճաւոր ընտրութեամբ, մի շատ նշանաւոր բան է մանկական կեանքի համար. ինչ որ գեղեցիկ է, և ազնիւ և նազելի, այն միշտ սիրելի է մարդկային ախորժակին, միայն թէ այդ ոտանաւորները լինէին ճիշդ բանաստեղծական նկարագիրներ ու պատկերներ՝ ծանօթ և բնական երեխայի աշխարհազննութեան:

Դասագրքերը են. „Ընթերցարան“ Ն. Տէր-Յակոբեանի, և „Մայրենի Լեզու“ (առաջին տարի) Տէր Ղեւոնդեանի:

## Ա. Դասատուն.

Այս դասատունը կարող են մտնել միայն այն աշակերտները, որոնք գիտեն վարժ կարդալ աշխարհաբառ, կարդացածը պատմել և գրել թելադրութեամբ առանց խոշոր սխալների: Քերականական ուսանելիքը են.

Բաժանումն գրերի. Նուրբ, Միջակ, Թաւ և Հագագային: Երկբարբառք. կանոն գրադարձութեան և կազմութիւն բառերի: Մասունք—բանի: Գոյական Անուանք. Յատուկ, Հասարակ և Հաւաքական: Անուն Ածական և Բաղդատութեան աստիճանները: Հոլով և Հոլովումն և սոցա բաժանումը կարճ և ամենահարկաւոր ծանօթութիւններով: Կանոնաւոր Հոլովումն գոյական անունների և յետադաս անկանոնների՝ Հայր, Մայր, Եղբայր, Քոյր, Այր, Աւր, Տէր: Ձայնաւորների Կորուսման և փոփոխման գիտելիքը: Համառօտ տեղեկութիւն բոլոր Մասանց—բանի վերայ: Համառօտ տեղեկութիւն բայերի և սոցա սեռի մասին: Խոնարհումն Էական բայերի. խոնարհումն բայերի միայն ներկայ ժամանակով: Վերլուծութիւն պարզ նախադասութեան Ենթակայով, Դիմաւոր բայով ու Սեռի խնդրով, միւս մասերը, առնելով „Մեկնողական բառեր“:

Ամէն մի քերականական կանոն ունի իւր հետ և պէսպէս հրահանգներ, յատուկ այդ կանոնների համար օրինակուած: Թելադրութիւնը՝ սկսած այս դասարանից մինչև չորրորդը փաղառութեամբ, կազմուած հայերէն պարապմունքների մի մասը:

## Բ. Դասատուն.

Հոլովումն անկանոն գոյականների „Թանձր, բարձր, ծանր, ևայլն: Հարկաւոր գիտելիք բայերի լծորդութեան



և խոնարհման մասին: Բայերի ժամանակները և եղանակները: Պարզ, բարդ և Ածանցեալ բայեր: Դիմորոշ յօդերի գործածութիւնը անունների վերայ: Համառօտ Տեղեկութիւն մասնիկների մասին թէ բայերի հետ և թէ գոյականների: Հոլովումն Անցեալ և անորոշ դերբայների: Վերլուծութիւն նախադասութիւնների գլխաւոր և Օժանդակ ձևերով: Մեկնողական ընթերցանութիւն և ուղղագրութեան դիւրըմբռնելի կանոնները: Թարգմանութիւն նախադասութիւնների և կարճ կարճ յօդուածների աշխարհաբառ:

## Գ. Դասատուն.

Կարևոր գիտելիք Մասանց—բանի: Պարզ և ուրիշ անուններից կազմուած Մակբայք: Նախդիրների պէսպէս գործածութիւնը: Նախադաս և յետադաս Նախադրութիւնները: Շաղկապ և Ձայնարկութիւն: Արտաքին կամ Անկանոն բայերը. Գիտելիք անդէմ կամ Դիմազուրկ բայերի մասին: Գործածութիւնը Ստաց. Ներկայի փոխանակ Ստորադասական եղանակի: Գիտելիք պատմական անկատարի մասին: Յարակատար և Գերակատար ժամանակները: Գիտելիք վերաբերեալ ուղղագրութեան կանոններին: Բացի ընթերցանութեան հրահանգներից այս դասատան աշակերտները ուսումնական տարւոյ վերջին կիսում թարգմանում են ռուսերէնից հայերէն կարճ կարճ նախադասութիւններ թէ հին թէ այժմեան հեղինակութիւններից: Հայերէն դասագիրքն է „Վկայաբանութիւն Վահանայ Գողթնացւոյ, որ աշակերտները պէտք է իմանան մեկնել ու փոխել աշխարհաբառ:

Դ. Դասատուն.

Համաձայնութիւն Մասանց—բանի: Ի՞նչ է Ստուգաբանութիւն կամ Բառաքննութիւն: Նախադասութեան ձևերը՝ գլխաւոր, Օժանդակ, Յարաբերական և Պարբերական: Ապառնի հրամայականի գործածութիւնը: Ենթակայ, դիմաւոր բայ, խնդիր սեռի և խնդիր բնութեան կամ պատշաճի: Ներգործական և Կրաւորական նախադասութիւնների փոխարկութիւնը: Ի՞նչ հոլովով դնելի է ենթական, եթէ բայը անցեալ կամ ապառնի դերբայով է: Ո՞ր մասունք բանի կարող են գնալ որպէս ենթակայ և որոնք որպէս բայ: Ո՞րպիսի փոփոխութիւն են կրում յոքնակի գոյական կամ ածական անունները էական անորոշ բայերի հետ: Զեղչումն ենթակայի և բայի: Ընդարձակ գիտելիք Որոշեալ և Անորոշ հայցականների մասին: Չէզոք բայերի գործածութիւնը ներգործաբար և ներգործականների չէզոքաբար: Կրկին հայցական հոլով: Կրաւորական բայերի խնդրառութիւնը: Երբեմն Սեռի խնդիրը ի՞նչ հոլովով է դրվում: Փոխադրութիւն հոլովոց: Յատկացուցիչ և Յատկացեալ, Բացայայտիչ և Բացայայտեալ: Խնդիր Չափոց, Գնոց և Արժէից: Համաձայնութիւն ածականների գոյականների հետ: Բաղդատական ածականների խնդրառութիւնը: Առանձին Անորոշ, ներկայ, Անցեալ և Ապառնի դերբայների մասին:

Այս Դասատան ձեռնարկներն են՝ քերականութիւն գրոց լեզուի. Ս. Շահազիզեանց. ձեռագիր տետր, և «Հիւսուածք» Կ. Կոստանեանցի:



Աշակերտները ուսումնական տարուայ առաջին կիսում թարգմանում են ռուսերէնից առանձին նախադասութիւններ, իսկ վերջին կիսում և փոքրիկ յօդուածներ՝ համառօտ կամ ընդհանուր հին պատմութենից կամ յոյն ու լատին դասագրքերից: Շաբաթը երեք դաս է հայերէն լեզուի:

Ե. Դասատուն.

Կրկնութիւն քերականութեան գլխաւոր գիտելիքների: Առանձին քերականական ձևերի՝ փոխադրութիւն, Արտաղութիւն, Բակառութիւն և Աւելադրութիւն: Երկու դաս լինելով այս դասարանում, մինը գնում է անպատրաստ, բանաւոր և գրաւոր թարգմանութիւնների համար և միւսը հայերէն ընթերցանութեան: Հայերէն ընթերցանութեան գիրքը է „Խրախձան Պատմութիւն“ Մ. Չամչեան: *)

Զ. Դասատուն.

Այս դասարանում այլևայլ քերականական գիտութիւնները, թէ ստուգաբանական թէ բաղդատական մասերով, կրկնվում են և հաստատվում ընթերցանելի հեղինակի շարադրութենից: Առանձին ուշադրութեամբ ուսանվում է աշակերտներին և այն գիտութիւնը, որ վերաբերվում է հելլենաբանական ասած ոճերին. թէ որոնք արդեօք այդ ոճերից մտել են հայերէն լեզուի մէջ և ընտանացել, և

*) Այս ձեռնարկից ուսուցիչը զգուշութեամբ ընտրում է մի որոշեալ ժամանակամիջոց կամ ամբողջ մի դար, որը կարդալով աշակերտաց հետ, հրաւիրում է նոցա լուրջ ուշադրութիւնը պատմական պարագայից վերայ և մատակարարում է աշակերտաց կարևոր տեղեկութիւններ Հայոց Պատմութեան մասին:

որոնք մնացել խորթ և օտար: Այս մտքով և աւանդւում մեկնութիւն զանազան հայկաբանական հելլենախառն ձևերի, որպիսի են օրինակի համար. Ենթակայի հայցական հոլովով դրուելը, երբ դիմաւոր բայն անորոշ դերբայով. է „Ասոյց... ոչ գոլ զորդի հաւասար հօր." „վասն որոյ ասաց փրկիչն խնդալ զառաքեալսն": Կրաւորաբար վարուած ներգործականների հայցական խնդիրը, երբ դոքա ցուցանուեն գործողութեան դարձը դէպի նոյն գործող անձը. „Ետես զթագ զաւիացուցն". „բաժանեցան աւարն ՚ի թշնամեաց ընդ եղբարս իւրեանց": Նոյնպէս մի քանի կրաւորականների հայցական սեռի խնդիր պահանջելը, երբ սոցա գործողութեանը ենթարկուած է ամբողջի մի մասը (accousativus graecus). „Կամար... ՚ի շահատակեն իւրում հարկանի յումեմնէ ակերբ զգլուխն". Յարաբերականի պէսպէս գործածութիւնը (attractio). „Դու ոչ մտանես, և զորս մտանեն, ընդդէմ կացեալ արգելուս": Հայոց բառերի հելլենաբար կազմութիւնը որպէս նիւթական թարգմանութիւն: Իգական սեռի դերանունները՝ Սէ, Դէ, Նէ, Կրաւորական ձևերը՝ Սերեցաք, Կոփիցաք, և այլ այնպիսի օտարամուտ ձևեր միայն հարևանցի յիշելով:

Հեղինակութիւնը, որ ուսումնասիրուեն այս դասարանում, է Եղիշէի Վարդանանց Պատմութիւնը: Բնագիրը կարդալուց առաջ, աշակերտները ծանօթանուեն հեղինակի վարքագրութեան հետ և միւս մատենագրական գործերին, որ թողել է մեզ նոյն հեղինակը: Հայկաբանական առանձին ոճերը, այլև անցքերի նկարագրական ամէն-ընտիր տեղերը աշակերտները սերտուեն բերան և իւրեանց կարդացածը թարգմանուեն ռուսերէն և կամ պատմուեն աշխարհաբառ, որ նոյնպէս անհրաժեշտ հարկաւոր է նոցա գործադրական լեզուն կանոնաւորելու ու մաքրելու օտար



տարրերից: Համառօտ գծագրութեամբ աւանդւուեն և տեղեկութիւններ վերաբերեալ Հայաստանի աշխարհագրութեան և այն ազգաբնակութիւններին ու տեղերին, որոնք պատահուեն նոյն Եղիշէի Պատմութեան մէջ և կարօտ են պարտուպատշաճ բացատրութեան:

Անպատրաստ, բանաւոր և գրաւոր թարգմանութիւնները, որ առաւելապէս լինուեն վերին դասարաններում, միակ նպատակ ունին՝ աշակերտի միտքը այնպէս վարժել, որ դա կարողանայ մի լեզուի ձևեր փոխել միւս լեզուի ձևերով, որպէս պահանջում է այդ լեզուի ոգին ու կանոնները:—Եւ դէպի այս նպատակն են ուղղած բանաւոր ու գրաւոր հրահանգները գրաբառից աշխարհաբառ կամ ռուսերէնից գրաբառ:

### Է, Ը. Դասատուն.

Եօթներորդ և ութերորդ դասարանների հայերէն դասագիրքը է Մովսէս Խորենացու Պատմութիւնը, և բաժանուած է այսպէս՝ առաջին և երկրորդ գիրքը մի դասարանն է կարդացվում, և երրորդը՝ միւսում: Դասերը սկսելուց առաջ աւանդւում աշակերտներին թէ ինչպէս սկսուեցաւ Հայաստանի ընդհանուր մտաւորական շարժումը հինգերորդ դարում, թարգմանչաց գործունէութիւնը, սուրբ Սահակի և Մեսրոպի ազդեցութիւնը հայոց քաղաքական կեանքի վերայ և այն ազդեցութեան հետևանքը ապագայում: աւանդւում է աշակերտներին տեղեկութիւններ վերաբերեալ Խորենացու վարքագրութեանը, նորա ոճի յատկութիւններին, նոյնպէս և նորա միւս հեղինակութիւններին: Բնագրի ընթերցանութեանը ընթացակից են լինում այլ և այլ տեղեկութիւններ, որոնց նպատակն է՝ մի կողմից

պարզաբանել հեղինակի պատմագրական հայեացքը և միւս կողմից ցոյց տալ պատմական իրողութիւնների կապը, որ շատ տեղ հակառակ է օտար պատմաբանների վկայութեան, այդ տեղեկութիւնները մասամբ վերաբերվումեն և վիպասանական, գուսանական, ցցոց և պարուց երգերին, այլև Մար—Աբասեան խմբագրութեանը Հայոց պատմութեան:*)

Ութերորդ դասատան աշակերտները տարին երկու անգամ տալիս են գրոց լեզուով շարադրութիւն:

Լազարեան ճեմարան ունի աշակերտական մատենադարան, որ բաղկացած է ընտիր գրաբառ և աշխարհաբառ գրքերից, աշակերտները պարտաւոր են կարդալ այդ գըրքերը և գործ դնել դոցանից, իւրեանց հայերէն շարադրութիւնների համար:

---

*) Եթէ ժամանակը ներում' ուսուցիչը ընտրում է ընթերցանութեան համար գանազան հատուածներ V դ. և XII դարու մեր ականաւոր հեղինակների երկասիրութիւններից, հաղորդում նոցա մասին կենսագրական տեղեկութիւններ նաև ձգում մի հարևանցի ակնարկ Հայոց գրականութեան և մտաւոր շարժման վրայ XII դարում և այլն.

## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

| Երես. | Տող | | Սխալ է | Կարդա |
|---|---|---|---|---|
| 9 | վեր. | 2 | յանդխմանում | յանդիմանում |
| 10 | ներք. | 17 | Ց. Ք. Պապովեանց | Ց. Ք. Պօպովեանց |
| 12 | վեր. | 3 | Աւաղանը | Աւազանը |
| 12 | ներք. | 3 | Քառարնօրեայ | Քարասնօրեայ |
| 13 | վեր. | 4 | Ծննունդ | Ծնունդ |
| 15 | վեր. | 2 | բացաարութեամբ | բացատրութեամբ |
| 16 | վեր. | 7 | Մարդեզութիւն | Մարդեղութիւն |
| 22 | ներք. | 2 | Առաքելոց | Առաքելոց |
| 23 | վեր. | 7 | առաքելոյ | առաքելոյ |
| 24 | ներք. | 6 | Վաղարշապատի | Վաղարշապատի |
| 25 | ներք. | 14 | Շահապխտվանու | Շահապիվանու |
| 26 | ներք. | 2 | Փաւստոսի | Փաւստոսի |
| 27 | ներք. | 4 | Կամսարտկանի | Կամսարականի |
| 33 | ներք. | 12 | դասարումը | դասարանումը |
| 40 | վեր. | 13 | accousativus | accusativus |

2018

4809

ՀՀ Ազգային գրադարան
NL0062888

Գինն է 15 կոպ.